

307. Ըրշկից տըսաւ զօշուն տը փախնի:

Էտեանց ըզինքն էլ գինաց, զինքն էլ մէկ եանէն ջարդից.
Ջարդից, գինաց, մօտացաւ Գաւթըն:

Էսաց. — Իս Գաւթը խիտ տը կուուիմ, տըսնանք Գաւթի
ինչ կտրըճ մարդ է:

Ձէ որ զասկեար տըսաւ էն ձիաւուը. էնու յիւջիւէն
փախան, որ փախնէր կընկնէր Խանտիւթը ձեռ. մէկ եանէն էլ
էն կոպանէր:

308. Խանտիւթ մօտացաւ Գաւթըն:

Շատիր կէն շշկուէն Գաւթը վերէն կը փախնէն,

Շատիր կէն շշկուէն Խանտիւթը վերէն կը փախնէն:

Գաւթին էլ փախնուղը կը զանի, կոպանի,

Խանդիւթն էլ փախնուղը կը զանի, կ'սպանի:

309. Գաւթի՛ք էն տեխէն էկաւ, էդա ձիաւուը էն տեխէն,

Հա փախնուղն փախաւ, սպանուղն էլ սպանուաւ:

Էդ Գաւթի՛ք, էդ ձիաւուը գնացըն դախ¹ մէ մէկը. մէկ
մէկը զարկին:

Էդա կնիկ ինչ շանուրդի էր:

Գաւթի՛ք որ թուը սկնայ կը բերէր, կնիկ զինք կը թլի Գաւթը
թը իտե, Գաւթը թուը կը զպնը գետին:

Էդա ձիաւուը թըրը բերնեով չը զմշի² զարնի Գաւթըն,
թըրը քեամիով մէկ դարպ կը քեշի Գաւթը քեամակ:

Գաւթի՛ք կը զվռի³ վուը էնու տը զարկի մէկէլ եան. էլի
կը զվռի քեամակ:

Ձիւը կէս օրին սկնայ Խանտիւթ զԳաւթին կը չարչարի:

310. Գաւթը ձին ապա չի նեղանայ, Խանտիւթը ձին
քրտքնքի մէջ լուացուիլի է.

Խանտիւթ էն գետի կը վախենայ, կը բեօռա.

— Է՛, ձիաւուը, մարդութեն սկուն չի, վուը ձիով կուըն.
էդա մարիֆաթ ձիուն է, քեօն չի, որ գիւ կտրըճ մարդ իս,
իջնինք տակ, ձիանք թուղնընք. իս, գիւ կիւլաշ⁴ կպնընք:

Կըսի. — Շատ աղէկ: Կէջնեն տակ.

311. Էրկուս քեօշգըրա⁵ կը բռնին, չիւը մութ կտայ. մէ
մէկու կը տանին, բերին:

Գաւթի՛ք կըսի. — «Ես՛ Մաջութայ Բանձը Ասպարաճին, Խաչ
պատրաստին վար իմ աջ թիվին», ասիլու պէս զէն մարդ կը
վերցի քեամիկը վերայ, կը գնի գետին:

312. — Գաւթի՛ք, կըսի էդա մարդ, ըծը մը սպանի:

1 Դէպի: 2 Թրք. = Մեղրանալ: 3 Պտտել, ժուռ գալ: 4 Թրք. =
Գօտեմարա. կողք պրծնել: